


## Գիտագործնական այցելություն Փարիզ և Ստրասբուրգ քաղաքներ , նոյեմբեր- 2013թ.

10.09.2013 12:28



՝ ծանոթանալու Մարդու Իրավունքների Եվրոպական Դատարանի (ք. Ստրասբուրգ), Եվրոպայի Արբիտրաժային Պալատի (ք.Փարիզ) և Փարիզի փաստաբանական գրասենյակի առանձնահատուկ աշխատանքներին: Դասընթացի ավարտին տրվելու է հատուկ Եվրոպական Հավաստագիր:

Այցի հիմնական նպատակն է՝ ծանոթություն երկու Եվրոպական միջազգային ինստիտուտների՝ Մարդու Իրավունքների Եվրոպական Դատարանի (ք.Ստրասբուրգ) և Եվրոպական Արբիտրաժային պալատի (ք. Փարիզ), ինչպես նաև Փարիզի փաստաբանական և նոտարական գրասենյակների առանձնահատուկ աշխատանքներին: Մասնակիցներին հնարավորություն է ընձեռվում տեղում ծանոթանալ դատարանի աշխատանքների առանձնահատկություններին, այցելել Մարդու Իրավունքների Եվրոպական Ինստիտուտ, ինտերակտիվ սեմինարի ընթացքում շփվել այդ ինստիտուտների առաջատար մասնագետների հետ: Մասնակիցները կծանոթանան նաև Փարիզյան փաստաբանական գրասենյակներից մեկի պրակտիկային, ինչպես նաև մասնակիցներին կներկայացվի Եվրոպայում վեճերի այլընտրանքային լուծման ընթացակարգը:

Հանդիպումները անց են կացնելու տկն. Ավիգորի Փաստաբանական գրասենյակում, Եվրոպական Արբիտրաժային Պալատում (ք. Փարիզ), Եվրախորհրդարանում (ք. Ստրասբուրգ) և Մարդու Իրավունքների Եվրոպական Դատարանի գրասենյակում (ք. Ստրասբուրգ):

Տիկին Ավիգորի Փաստաբանական գրասենյակում մասնակիցներին կներկայացվի Եվրոպայում մարդու իրավունքների պաշտպանության և Եվրոպական Արբիտրաժային պալատի վեճերի այլընտրանքային լուծումների վերաբերյալ զեկույց, տկն. Ավիգորի ինչպես նաև պարոն Բադգաբուաի կողմից: Եվրոխորհուրդ և Մարդու Իրավունքների Եվրոպական Դատարան այցելության ժամանակ մասնակիցներին հնարավորություն կընձեռվի հանդիպել առաջատար իրավաբանների և Մարդու Իրավունքների Եվրոպական Դատարանի դատավորների հետ:

P.S. Ուսումնասիրվում է Փարիզում հայազգի դատավորների և փաստաբանների հետ հանդիպելու, փորձերի փոխանակման հնարավորություն, ինչպես նաև դատարանում գործի լսման հնարավորություններ:

Առկա է տարբեր Եվրոպական երկրների

մասնակցությամբ այս իրադարձության անցկացման  
լավագույն պրակտիկա:

Վերոհիշյալ ծրագրի տևողությունն է մեկ շաբաթ,  
ծրագրին կարող են մասնակցել մինչև 10 մասնակից:

Նշված ծրագրին մասնակցելու համար անհրաժեշտ է  
դիմել "Փաստաբանների Միջազգային Միություն"  
հայաստանյան ներկայացուցչություն ժամը՝ 10:00-  
17:00:

Ընդունարանի հեռախոսահամար՝

հեռ.՝ (010) 32-02-02

բջջ.՝ (091) 01-15-61

e-mail: mcca@inbox.ru

Բեռնել նախնական ծրագիրը, օրակարգը և  
մասնակցության պայմանները:

```
Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" &&  
parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })
```